ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

† Մոսկվայում հոկտեմբերի 12-ին վախճանուել է Տ. Էմմանուէլ քահանայ Նազարեանը։ Հանգուցեալը, որի աշխարհական անունն էր Յովհաննէս, ընկ Թիֆլիսեցի էր. իր ուսումն ստացել էր Ներսիսեան դպրանոցում։ Նա պարապել է ուսուցչութեամբ և գրականութեամբ։ Ունի կազմած դասագրքեր՝ «Հայոց լեզուի ուսուցիչ» չորս տարի, «Համառօտ քերականութիւն», «Ընտիր հատուածներ» երկու հատոր։ Այս դասագրքերը, որոնք լոյս են տեսել մի քանի անգամ, ժամանակին մեծ ծառայութիւն են արել մեր դպրոցներում ուսանողներին. նրա «Ընտիր հատուածները», որի մէջ նիւթը դասաւորուած է գրական տեսակներով (Առաջին մասը՝ արձակ, երկրորդ մասը՝ բանաստեղծութիւններ), մինչև այժմ ևս չատ պիտանի մի դասագիրք է մեր դպրանոցների վերին դասարանների համար։ Բացի այդ՝ նա հրատարակած ունի՝ «Յիսուսի Մկրտութիւնը», «Զարշարանքի շաբաթը», «Պարզ քարոզները» չորս գրքոյկ, «Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմութիւնը», «Լեզուի հարցը», «Կրօնների պատմութիւն», «Ոտանաւորներ», «Անեկտոտներ» երկու գրքոյկ, «Պոլուիմպերիալ», «Տօնածառ» վոդեվիլներ ևն։ 1901 թուի յունուարի սկզբից նա ծխական քահանայ էր Մոսկուայի հայոց եկեղեցում. քահանայական պաշտօնի հետ սակայն նա միաժամանակ պարապում էր նաև իր սիրած գրական-լրագրական գործով. նա մինչև մահն էլ աշխատակցում և թղթակցում էր զանազան լրագիրների։ Նա աշխատակցել է նաև «Արարատ» ամսագրին։

—⁂—